

գաւառն Զաւախաց. եւ բանակին ի գիւղն, որ կոչի Դիւեկն, եւ մանուկն Աբաս թագաւորն կարուց կարմրագգեստ զգունդն իւր ունելով: Եւ ամենայն զօրն վրաց եւ վասպուրականի, Սիւնեաց եւ Աղուանից իշխանքն միահաւաք լինէին ընդդէմ Ափսաղաց զօրուն»⁴⁹:

Այնուհանդերձ պէտք է նշենք, որ աւատատիրութեան դարաշրջանի բանակները կայուն թուաքանակ չունէին: Դա վերաբերում է ինչպէս եւրոպական երկրներին, այնպէս էլ Բիւզանդական կայսրութեանը⁵⁰, ինչը նշանակում է, որ Հայաստանում եւս ոչ միշտ էր հաւաքագրւում նախատե-

49 Նոյն տեղում, էջ 252:

սուած քանակութեամբ զօրք:

Ակադեմիկոս Յակոբ Մանանդեանի ղիպուկ ղիտարկմամբ՝ «Բաժանուած լինելով անջատ մանր թագաւորութիւնների՝ Հայաստանը թէեւ քաղաքականապէս շատ թոյլ էր, սակայն ռազմական տեսակէտից հայութիւնը Առաջաւոր Ասիայի զօրեղ ժողովուրդներից մէկն էր»⁵¹: Քաղաքական մասնատուածութիւնն էլ զրկում էր Բագրատունեաց Հայաստանը թշնամիների դէմ միասնաբար հանդէս գալու եւ ունեցած ռազմական ուժերը արդիւնաւէտ գործածելու հնարաւորութիւնից:

50 В. Колташов, Византийская армия IV-XIII веков, <http://byzantion.ru/polemos/ByzArm.htm>
51 Յ. Մանանդեան, Բնական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, «Երկեր», հտ. Գ, Երևան, 1977, էջ 15:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 1918 Թ. ԱՇՆԱՆԸ

Աշոտ Հայրունի

Թուրքական կառավարութիւնը, չկարողանալով միանշանակօրէն մերժել սովահարութեան մատնուած անօթեւան բազմահազար հայ փախստականների վերադարձը հայրենի բնակավայրեր թոյլատրելու վերաբերեալ գերմանական կառավարութեան եւ բանակի գլխաւոր հրամանատարութեան կողմից հնչող կոչերն ու պահանջները, ի վերջոյ կարծես հարկադրուած եղաւ գնալ որոշ զիջումներ: Էնվերը կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Բեռնշտորֆին/եւ այնտեղ գտնուող հայ պատուիրակներին իր պատրաստակամութիւնն էր յայտնել Լոռին եւ Փամբակը «որոշակի պայմաններով» հայերին տրամադրելու վերաբերեալ եւ, բացի այդ, ինչպէս վկայում էր նաեւ նրա կողմից օգոստոսի 3-ին գերմանական բանակի գլխաւոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ Պաուլ Ֆոն Հինդենբուրգին ուղարկուած նամակը, համաձայնել էր հայերի վերադարձը թոյլատրել, բայց միայն մասնակիօրէն, այսինքն՝ դէպի Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծից առնուազն 20 կմ հեռաւորութեան վրայ ընկած տարածքը եւ նաեւ այն շրջանները, որտեղ մուսուլմանների եւ հայերի միջեւ մարտեր տեղի չէին ունեցել (ընդ որում՝ նա այդ տարածքներից շեշտում էր մասնաւորապէս Բաթումի շրջանը), իսկ փախստականութեան անվերապահ, գանգուածային վերադարձը նա շարունակում էր մերժելի համարել՝ դա «հիմնաւորելով» այն պատճառաբանութեամբ, թէ նրանց բնակավայրերից շատերը գտնուում էին թուրքական բանակի թիկունքում, եւ վերջինիս համար կը ստեղծուէր վտանգաւոր իրադրութիւն, իսկ միւս կողմից՝ բանակը,

որը պէտք է ձեռնամուխ լինէր Բաքուի դրամանը, թիկունքի հետ իր յետադարձ կապից կը մեկուսացուէր¹:

Թուրքական կառավարութիւնն, այնուհանդերձ, իր վերոնշեալ յանձնառութիւններով նոյնպէս սոսկ ժամանակ շահելու նպատակ էր հետապնդում եւ մտադիր էր դրանք իրագործել: Դա ակնյայտ դարձաւ այն ժամանակ, երբ գեներալ Ֆոն Զեկտը, տեղեկանալով Լոռին եւ Փամբակը հայերին յանձնելու՝ էնվերի համաձայնութեան մասին, իր կողմից եւս հեռագրով համապատասխան կարգադրութիւն կատարեց՝ այն ուղարկելով Բաթում եւ այդ մասին տեղեկացնելով թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Կրես ֆոն Կրեսենշտայնին: Նրա հեռագրի՝ Բաթում Կրեսենշտայնին երկու ժամ անց, հասնելուց տասացիորէն երկու ժամ անց, սակայն, ինչպէս վկայում էր Ֆոն Կրեսը, մի նոր հեռագիր է ստացւում էնվերի կող-

1 Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 418-420: Այսուհետեւ այդ ժողովածոյի փաստաթղթերից կատարուած յղումները համեմատել դրանց վերանայուած տեքստերի հետ, մասնի որ ժողովածոյի առաջին փաստաթղթերում կրճատումներ ի յայտ գալու դէպքում անստի են առնուել եւ օգտագործուել են անստի դրանց վերանայուած տեքստերը: St'u Wolfgang Gust, Revidierte Lepsius-Edition, <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De? OpenFrameset>: Էնվերի վերոնշեալ անակոյմ ամրագրուած այդ տեսակետն, ի դէպ, համոզուած էր այն հիմնական պատրուակը, որով թուրքական կողմը փորձում էր իր գերմանացի դաշնակցին համոզել փախստականների զանգուածային վերադարձի ռազմավարական անպատասխանատուութիւնը:

սամբ՝ սովորական դոյլերով: Երկաթուղային հեռախոսագիծը դեռ չէր վերականգնուել: Չկային ուղեւայաքներ, եւ ամէն օր հնարաւոր էր, որ գնացքները դուրս գային գծերից: Երկաթուղային երթեւեկութիւնը յղի էր մեծ վտանգներով:

Ինչ վերաբերում էր Թիֆլիսում եւ Երեւանում նոր նշանակուած թուրք դիւանագիտական ներկայացուցիչներ Աբդուլ Քերիմ փաշային եւ Մեհմեդ Ալի փաշային, որոնք դեռ գտնուում էին Բաթումում, ապա Փոն Կրեսը նշում էր, որ նրանք երկուսն էլ իրեն ծանօթ, յետագէմ ու Փանատիկ մահմեդականներ էին, որոնցից կարելի էր առաջին հերթին լաւ ծառայութիւններ սպասել պանիսլամական պրոպագանդայի զարգացման հարցում: Ուստի ինքնին հասկանալի է, որ նրանք հայ փախստականների վերադարձի հարցին նպաստելու եւ համատեղ կերպով տարածաշրջանային այլ խնդիրներ լուծելու հարցում պիտանի լինել չէին կարող:

Փոն Կրեսի երեւանեան այցը եւ հանդիպումները Հալիլ փաշայի ու հայկական կառավարութեան հետ, ինչպէս եւ նրա աջակցութեամբ Հալիլի եւ հայկական կառավարութեան միջեւ տեղի ունեցած բանակցութիւնները, ինչպէս նա իր՝ սեպտեմբերի 3-ի տեղեկագրին կից մի յաւելումով իրազեկում էր կանցլերին, ունեցել էին հետեւեալ արդիւնքները. հակառակ Հայաստանի կողմից Թուրքիային «սպառնացող վտանգի» վերաբերեալ էսադ, Շեւքի եւ Նուրի փաշաների՝ միտումնաւոր կերպով աղաւաղուած տեղեկութիւնների՝ Հալիլ փաշան այն համոզումն էր յայտնել, որ Հայաստանն ամենեւին մտադրութիւն չունէր հանդէս գալ Թուրքիայի դէմ, եւ խոստացել էր էնվերին պարզաբանել, որ փախստականների վերադարձի դէպքում հարցը հիմնականում վերաբերում էր կանանց, երեխաներին ու ծերունիներին, իսկ դեռ կենդանի մնացած՝ զէնքի ունակ փոքրաթիւ տղամար-

դիկ զէնք կրելու դէպքում կարող էին նախապէս հեշտութեամբ զինաթափուել: Հալիլին ինքն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուց 20 կմ դէպի արեւելք հայերի վերադարձը թոյլատրելու վերաբերեալ էնվերի առաջարկը բնութագրել էր որպէս «անարժէք» եւ միաժամանակ Փոն Կրեսին խոստացել էր մեծազոյն եռանդով միջնորդել Լոռու եւ Փամբակի շրջանները հայերին յանձնելու համար: Ինչ վերաբերում էր էսադ փաշային, ապա, ինչպէս ընդգծում էր Փոն Կրեսը, նրա նենգամտութիւնը լաւագոյնս ապացուցուած էր Պաւլասին տրուած այն թիւր պարզաբանմամբ, թէ այն տարածքների որոշարկումը, որտեղ փախստականներն առանց կոտորածների վտանգին ենթարկուելու կարող էին վերադառնալ, գտնուում էին ոչ թէ իր, այլ Հալիլ փաշայի՝ իրաւասութեան ներքոյ, ինչը, սակայն, վերջինս հերքել էր:⁸

Փոն Կրեսի այս տեղեկագիրն ու գերմանա-թուրքական երկխօսութեան միւս վաւերագրերն, անշուշտ, մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում ոչ միայն հայկական խնդրի վերաբերեալ երկու դաշնակիցների դիրքորոշումները, այլեւ թուրքական բարձրագոյն հրամանատարութեան ներսում առկայ փոխյարաբերութիւնները պարզաբանելու առումով: Այն հարցին, թէ արդեօք Հալիլը որքան անկեղծ էր գեներալ Փոն Կրեսին ներկայացրած իր նկատառումներում, անշուշտ, անհնար է միանշանակօրէն պատասխանել: Նրա նշանակումից եւ գեներալ Փոն Կրեսի հետ նրա հանդիպումներից յետոյ, սակայն, կարծես թէ սայլը սկսեց տեղաշարժուել:

Ինչպէս Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը տեղեկացրել էր Փոն Կրեսին, թուրքերը Ալեքսանդրապոլի եւ Կարսի շրջաններից 14 000՝ հիմնականում գիւղաբնակ հայերի աքսորել էին էրզ-

8 Նոյն տեղում, էջ 433:

րում եւ Հասան Կալա՝ այնտեղ նրանց որպէս աշխատուած օգտագործելու համար: Նրանք այնտեղ, սակայն, ըստ նոյն տեղեկութեան, շահագործուած էին անմարդկային կերպով եւ դատապարտուած էին սովամահութեան:⁹ Բունի կերպով Թուրքիայի խորքը տարուած այդ մարդկանց թոյլատրուեց վերադառնալ, եւ սեպտեմբերի առաջին տասնօրեակի ընթացքում տղամարդկանց 400 խումբ, որոնց շարքում կային նաեւ սպաներ, վերադարձան Երեւան: Լէյտենանտ Այգենմանը,¹⁰ հաղորդելով, որ թուր-

⁹ Die Armenische Frage..., էջ 579:
¹⁰ Թիֆլիսում տեղակայուած գերմանական ախաջոն բաժանմունքի լէյտենանտ Այգենմանը օգոստոսին ուղարկուել էր Երեւան՝ քաղաքական եւ ռազմական բնօրէնի դիտարկումներ կատարելու: Բաժանքեռից Երեւան ճանապարհը անցել էր հայկական հեծելազօրի ուղեկցութեամբ: Երեւանում Գրան արդէն ապաստւ էր այդ այցով խանդավառուած մարդկանց մի մեծ բազմութիւն, իսկ Երեւանի հոգեւոր առաջնորդի տանը կայացած ճաշկերոյթին Գրան եղել ոչ միայն հայ քաղաքացիական ու զինուորական պաշտօնատար անձինք, այլեւ հանրապետութեան ազգային փոքրամասնութիւնների, անախապետութիւնում գործող բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները: Եւ, այնուհանդերձ, մտան ոգեւորութիւնն անհիմն էր, իսկ լէյտենանտի «դիտարկումներն» ու այնուհետեւ պատրաստուած գեկուցագիրը հիմնականում յատկանշուում էին մակերեսայնութեամբ, անտեղեկութեամբ եւ, թերեւս, անախապետական քաղաքական «ընկալումներով» պայմանաւորուած անախատրամադրութեամբ: Միգնէլ իսկ Այգենմանին ցուցաբերուած ջերմ եւ հիւրընկալ վերաբերմունքը Գրան կողմից ընկալուել էր որոշակի քաղաքական եզրատեքստով: «Այն պահին, երբ մենք մտանք Երեւան, գրում էր Գրան, մարդիկ կարծում էին, թէ թուրքերը հիմա մեր հրամանով իսկոյն Բրեստ-Լիտովսկի գծից այն կողմ կը քաշուեն, եւ Հայաստանը կը կարողանայ իր հին սահմանները ձեռք բերել: Դա ոչ միայն պարզուրակ կերպով մտածող ժողովրդի կարծիքն էր, այլեւ Գրանի մեծ թոյով կրթուած հայերի: Բանի որ այդ յոյսը, երկու ամիս չանցած, չի իրականացել, ... տրամադրութիւնը փոխուել է, եւ Գրանը դարձեալ աւելի Անգլիայի հետ եւ սիրախաղ անում»: Տեղեկագիրը, որն, ի դէպ, բնութագրում էր ինչպէս թաթարների, այնպէս էլ հայերի ընդհանուր կրթամակարդակի, հանրապետութիւնում զի-

նուորական գործի դրուածքի վերաբերեալ բացասական գնահատումներով, յուշում է, որ հեղինակի անախատրամադրութիւնը որոշակիօրէն պայմանաւորուած էր Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Անգլիայի հանդէպ հայերի դրական վերաբերմունքով: Ըստ այդմ՝ ան պատեհապաշտ՝ էր համարում հայ քաղաքական գործիչներին, որոնք, ըստ Գրան, կարող էին այսօր Գերմանիայի իսկ վաղը, եթէ իրադրութիւնը փոխուէր, Ռուսաստանի կամ Անգլիայի կողքին լինել: Նա չէր զրանում հայերին միգնէլ իսկ «ծոյլ», «պարզուրակ անգնորդ քաղաքացի» անուանել եւ ի հաստատումն Գրան կատարել Գաւա յոյս, իբրեւ թէ մի հայի կողմից (վերջինիս անունը Գրանում է Ը. Ա. յայտնումով) օգոստոսի 19-ին իրեն ստանած հետեւեալ խօսքերից. «Հայկական կառավարութիւնը բաղկացած է բանդիտներից ու խոռվարներից, ժողովուրդը բիրտ է, վարեցի եւ չուրարներից, ժողովուրդը քաղաքական է»: Գի մշակոյթ, իսկ զինուորներն առաջակներ են»: Այգենմանի պարզուրակ եւ «գայուն» քաղաքական ընկալումն էլ աւելի ակնբախ է դառնում հետեւեալ դիպուածի միջոցով. տեղեկանալով անտեղեկացիների կողմից Երեւանում ստեղծուած «Բրիտանացի երիտասարդների միութիւն» անունը կրող եւ անախապետութեամբ գործունէութեամբ զբաղուող մի ընկերութեան մասին, որտեղ, Գրան համոզմամբ, անտեղեկան քաղաքական պրոպագանդա էր վարում, Գրան ի հակամարտ Երեւանում անցկացրած շաբաթների ընթացքում մէկ այլ որբանոցի անանձնայատուկ օժանդակութիւն ցուցաբերել եւ այնտեղ հնարած ժանդակութիւն ցուցաբերել վարել: Ինչպէս ինքն «հակապրոպագանդա» վարել: Ինչպէս փաստում է Այգենմանի տեղեկագիրը. Գրան 2փոյններ էր ունեցել անախապետութեան թուրքերը, ըստ Գրան հաւաստման, անախապետութեամբ, ըստ Գրան հաւաստման էին, քանիտ դիրքորոշում չունէին ու հասկանում էին, որ թուրքական տիրապետութիւնը իրենց կեանքում առաջընթաց չէր բերելու, եւ որ թուրքերի անախապետութեան ու տարածքային գրաւումները միայն այդ տարածքների կողմից անախապետական էին հետապնդում: Այս ամենով հանդերձ՝ Այգենմանը միաժամանակ արձանագրում էր, որ հայերն ունեն բոլոր հարեան ժողովուրդներից գերազանցող մտաւորականութիւն եւ շատ ընկալունակ եւ մտաւոր ու գիտական արժէքների ակաւումնաբեր, իսկ վաճառականներն էլ վարում: Ինչ վերաբերում էր Հայաստանի տնտեսութեան զարգացման հետապնդման, ապա Գրան զարգացման հետապնդման արդիւնաբերական ու գիտական հետապնդման ձեռնարկութիւնները անտեսագրում էր, որ երկրակալ անտեսագրութեան ձեռնարկութիւնները անտեսագրում էր, որ ինչպէս թաթարների, այնպէս էլ հայերի ընդհանուր կրթամակարդակի, հանրապետութիւնում զի-

հանձնարարական հարստություններն էլ մեծ եկամուտներ կարող էին բերել:

Եթե Այգեմնանի մեկնաբանություններն ու գնահատումները հիմնականում չափազանց մակերեսային, պարզունակ եւ խոցելի են, ապա Գրա'ականատեսի վկայությունները պարունակում են արժեքատու տարրեր: Ուշագրաւ է, օրինակ, Գրատեղեկությունն այն մասին, որ սկզբնապէս Երեւանում բնակուող 20,000 թաթարներից մօտ 15,000-ը մինչեւ օգոստոս արտագաղթել էր, բայց քանի որ «թուրքերի մօտ» Գրանց կենսապայմանները չէին բարելաւուել, Գրանք ձգտում էին ետ վերադառնալ, մինչդեռ սահմանի վրայ թուրք գիտութեանը յարուցած արգելքների պատճառով չէին կարողանում դա անել: Ըստ Գրա' Երեւանում գտնուող թուրք աւագ լէւտենանտ Նուրի բէյն իր հերթին ձգտում էր այնտեղ մնացած 5000 թաթարներին, հակառակ Գրանց կամքի, արտագաղթեցնել՝ այն պատճառաբանութեամբ, որ Գրանց թիւը հայերի համեմատ շատ քիչ էր, եւ բախում առաջանալու դէպքում Գրանք չէին կարող հայերի դէմ հակակշիռ դառնալ: Այդ թաթարները, որոնց մէջ կային նաեւ շատ «ուներդներ», Այգեմնանի վկայակոչմամբ, չէին ուզում արտագաղթել՝ իրենց ունեցուածքից չզրկուելու համար: Նրանց խնդրանքով Այգեմնանց այդ մասին մի համապատասխան գրութեամբ տեղեկացնում է Հալիլ փաշային: Վերջինս տեսակցում է նաեւ թաթարական մի պատուիրակութեան հետ եւ, ըստ թաթարների տեղեկութեան, Գրանց արտօնում ցանկութեան դէպքում մնալ Երեւանում: Իր տեղեկագրին Այգեմնանը կցել է նաեւ մի ցուցակ, որը ներկայացնում էր Կարաղամշլու անունով մի հայկական գիւղի՝ թուրքերի գրաման հետեւանքով փախստական դարձած բնակչութեան կրած կորուստները: Ցուցակի համաձայն, որը կազմելիս նա առաջնորդուել էր Երեւանի մօտ գտնուող բնակիչների կողմից ուղղակիօրէն իրեն հաղորդուած տուեալներով, 900 բնակիչ ունեցող գիւղի 100 բնուանիք փախստի արդիւնքում կորցրել էր 26,520 վեդոյ գինի (1 վեդոն կազմում է 12,3 լիտր), 481 փուղ բամբակ (1 փուղը կազմում է 40 ֆունտ կամ 16,38 կգ), 208,5 փուղ հացահատիկի բերք, 101 բնուանի կենդանի, 137200 տնային իր, 675600 դրամական միատր գումար (դրամի անունումը մշտնա չէ): Տե՛ս Wolfgang Gust, Revidierte Lepsius-Edition, 1918-10-30-DE-002-V, [ճական կառավարութիւնը նրանց թույլատրել էր վերադառնալ իրենց գիւղերը, որոնք հիմնովին աւերուած էին, միաժամանակ ընդգծում էր, որ այդ մարդիկ գտնուում էին «սոսկալի» վիճակում:¹¹ Իսկ թէ ինչպիսին էր այդ սոսկալի վիճակը, աւելի որոշակի է դառնում հեղինակի հետեւեալ տեղեկութիւնից. «Ես ինքս գնացի կայարան եւ այնտեղ տեսայ առաջին 200-ին, որոնք գալիս էին Էրզրումից: Մարդիկ ցնցոտիներով մէջ պատուած էին, մասամբ մերկ ոտքերով, կեղտի պատճառով աչքերը չուած եւ ամբողջովին թերսնուած էին: Երկուսը սովից մահացան Իլուխանգլուում, ուրիշ երկուսը Իլուխանգլուից Երեւան ընկած կարճ ճանապարհահատուածում, իսկ երեքը Երեւանի կայարանում հոգեվարքի մէջ էին եւ փատորէն նոյն օրն էլ մահացել են: Նրանց մի զգալի մասն այնպէս թուլ էր, որ գնացելի վազոնից մեծ դժուարութեամբ դուրս եկաւ եւ անմիջապէս ստիպուած էր դարձեալ գետնին մեկնուել: Նրանք պնդում էին, որ Էրզրումից մեկնելու ժամանակ իրենց նոյ-](http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De?OpenFrameset, յաւելում 2: Անդրադառնալով հայերի դէմ թաթարներից ստացուած մի շարք բողոքներին՝ Այգեմնանը սեպտեմբերի 13-ին գրում էր, թէ, ըստ այդ բողոքների, այնտեղ, որտեղ հայերը գերակշռութիւն ու-</p>
</div>
<div data-bbox=)

նէին, բոնություններ էին իրականացնում մուսուլմանների դէմ, մինչդեռ եթէ թաթարների կողմից իրագործուած՝ հայերի կոտորածներն իրեն բաւականաչափ յայտնի էին, ապա նույնը հնարաւոր էր ասել հայերի կողմից իրագործուած՝ թաթարների կոտորածների մասին (նույն տեղում, յաւելում 8): Ի դէպ, ըստ Այգեմնանի մէկ այլ վկայութեան, Պարսկաստանում մեծ վրդովմունք էր առաջացրել այն հանգամանքը, որ թուրքիան արեւելեան անդրկովկասեան հանրապետութիւնը կոչել է Ադրբեջան, որպէսզի «կարողանայ այդ կերպ պարսկական Ադրբեջանի հանդէպ պահանջ առաջադրել: Պարսկաստանում զայրոյթն առաձգապէս մեծ է այն պատճառով, քանի որ պարսիկներն ամենեւին բարեկամ չեն թաթարներին» (նույն տեղում, յաւելում 7):

Յոն Կրեւը սեպտեմբերի 9-ին թուագրուած՝ Այգեմնանի վերոնշեալ տեղեկագիրը յաւելումներին հետ միասին կանցլերին ուղարկեց հոկտեմբերի 30-ին՝ այն օրը, երբ թուրքիան ստորագրեց զինադադարը, եւ երբ Յոն Կրեւը արխիաւորման նպատակով պէտք է Բեռլին ուղարկէր իր մօտ գտնուող բոլոր փաստաթղթերը:

11 Deutschland und Armenien..., էջ 435:

նիսկ մի կտոր հաց չեն տուել: Երէկ տեղահասած երկրորդ խումբը պէտք է նոյն պատկերն ունեցած լինի: Այդ խմբից եւս մի քանի մարդ մահացել է: Թէ արդեօք այդ խմբին նոյնպէ՞ս օրեր տեւող երկաթուղային ճամփորդութեան համար ոչ մի սննդամթերք չեն տուել, ես դեռ չեմ հասցրել տեղեկանալ»:¹²

Ինչեւէ, Թուրքիայի հետ բարձր մակարդակով տեղի ունեցող բանակցութիւններում պաշտօնական Գերմանիան սկզբունքօրէն շարունակում էր հանդէս գալ Բրեստի պայմանագրով նախատեսուած սահմանները ճանաչելու պահանջով, ինչը Թուրքական կառավարութեան բացայայտ եւ անուղղակի ընդդիմութեան, նաեւ «գիւլանադիտական խուսանաւումների» արդիւնքում շարունակ փակուղի էր մտնում: Սեպտեմբերին, սակայն, գերմանական կողմի այս դիրքորոշումը, կարծես թէ, սկսեց իր պտուղները տալ:

Սեպտեմբերի 7-ին Թալէաթ փաշան Վիեննայից մեկնեց Բեռլին եւ նոյն օրը հանդիպեց պետքարտուղար Ֆոն Հինցէին՝ նրան ներկայացնելով Կովկասի ապագային վերաբերող իր ծրագիրը¹³: Ըստ այդմ՝ վրաստանը (որից մի քանի շրջան պէտք է անցնէր Թուրքիային), Հայաստանը եւ Ադրբեջանը պէտք է դառնային բուֆերային պետութիւններ Ռուսաստանի դէմ: Բաբուն պէտք է տրուէր Ադրբեջանին, որը պատրաստ էր Գերմանիային տալ նաւթի մատակարարման ցանկացած երաշխիք: Փոխարէնը՝ Թալէաթը պատրաստ էր ամբողջ Դորուջան թողնել Բուլղարիային՝ շարունակ կրկնելով, որ Թուրքիան ցանկանում էր լաւ

12 Նոյն տեղում, յաւելում 3:
13 Die Armenische Frage..., էջ 578: Հանդիպման սկզբում Թալէաթը Յոն Հինցէին մեղադրել էր այն հարցում, որ Գերմանիան, իբրեւ թէ, Կովկասի վերաբերեալ համաձայնութիւններ էր կնքել Ռուսաստանի հետ՝ առանց Թուրքիային տեղեկ պահելու, ինչը, սակայն, պետքարտուղարը հերքել էր: Նոյն տեղում:

յարաբերութիւններ ունենալ Բուլղարիայի հետ: Այս ամէնի մասին մի հեռագրով սեպտեմբերի 8-ին տեղեկացնելով Կ. Պոլսի գերտեսական գեսպանին՝ Հինցէն միաժամանակ յայտնում էր, որ Թալէաթը մի նոր ծրագիր էր մշակել՝ կապուած Թուրքմենիայի հետ, այն է՝ 14 միլիոն մուսուլմանական առուջութեամբ¹⁴ այդ երկիրը ռազմական առույժով կազմակերպել եւ մասնակից դարձնել պատերազմին՝ ընդդէմ Անգլիայի ու Ռուսաստանի: Թալէաթը Հինցէից պահանջել էր այդ ծրագրի իրագործման համար իրեն տրամադրել գերմանական սպաներ եւ ենթասպաներ:

Ինչ վերաբերում էր կովկասեան սահմաններին առնչուող՝ կոստանդնուպոլսում նախատեսուած բանակցութիւններին, Թալէաթը դէմ էր արտայայտուել այն բանին, որ Բուլղարիան եւ Աւստրիան նոյնպէս մասնակցէին դրանց, բայց ընդգծել էր, որ սահմանները չպէտք էր ամրագրուէր թեմէն: Պետքարտուղարի կողմից յիշատակուած այն փաստի առնչութեամբ, որ, հակառակ Գերմանիայի կողմից արտայայտուած կնքել վրասթուրքիան պայմանագրեր էր կնքել Թուրքիան, Հայաստանի եւ Ադրբեջանի հետ, Թալէաթը պատասխանել էր, թէ ինքը վստահ էր, որ այդ հարցում կը յաջողուէր համաձայնութեան գալ՝ «կատակով» նաեւ աւելացնելով, թէ առանց նման համաձայնութեան նա չէր կարող վերադառնալ կոստանդնուպոլիս¹⁵:

Նման համաձայնութեան կայացման շուրջ Թալէաթի եւ գերմանական արտգործնախարարութեան միջեւ բանակցութիւնները տեղի ունեցան սեպտեմբերի երկրորդ կէսին Բեռլինում: Ընդ որում, ուշագրաւ է, որ գերմանական կողմը դարձեալ հանդէս էր գալիս Բրեստի պայմանագրի պայմանները

14 Այս տուեալը հաղորդել էր Թալէաթը:
15 Նոյն տեղում, էջ 578-579:

պահպանելու պահանջով:¹⁶ Ըստ բանակցութիւնների ընթացքում Թալէաթ փաշայի կատարած հաղորդման՝ նա վրացիների եւ հայերի հետ իր մինչայժմեան քննարկումներում համոզուել էր, թէ Թուրքիայի համար որքան կարեւոր էր այդ երկու ժողովուրդների հետ բարիդրացիական յարաբերութիւնների պահպանումը: Միաժամանակ, ինչպէս հաղորդում էր Ֆոն Շթումը Կոստանդնուպոլսի դեսպանին ուղարկած սեպտեմբերի 20-ի հեռագրում, Թալէաթը վստահեցրել էր, որ բացի Կարսից, Արդահանից եւ Բաթումից, Թուրքերի կողմից գրաւուած միւս տարածքները պէտք է վերադարձուէին: «Ուստի, այդ առնչութեամբ գրում էր Ֆոն Շթումը, կարելի է յուսալ, որ Թուրքական կառավարութիւնն այժմ պատրաստակամութիւն կը ցուցաբերի ետ քաշուելու հարցում»¹⁷, եւ, ըստ այդմ, նա դեսպանին յանձնարարում էր աւստրո-հունգարական դեսպանի հետ միասին հարցի առնչութեամբ համապատասխան քայլեր ձեռնարկել Թուրքական կառավարութեան մօտ:

Սա, անշուշտ, Հայկական խնդրի առնչութեամբ գերմանա-թուրքական յարաբերութիւններում աննախադէպ առաջընթաց էր, քանի որ Թուրքական կողմը, առաջին անգամ հրաժարուելով բոլոր պատրուակներ

16 Յատկանշական է, որ, ինչպէս վկայում է սեպտեմբերի 9-ին Գերմանիայի արտգործնախարարութեան գաղտնի խորհրդական Նադոլցիի կողմից ստորագրուած մի փաստաթուղթ, արտգործնախարարութիւնը գիտակցում էր Թիֆլիս-Ջուլֆա երկաթուղին հայկական կողմին յանձնելու նպատակայարմարութիւնը եւ կողմ էր դրան: «Թիֆլիս-Ջուլֆա երկաթուղին պէտք է մնայ Հայաստանին», գշուած էր այդ փաստաթղթում: Այն դէպի Պարսկաստանի ամենակարեւոր հատուածը տանող միակ երկաթուղին է: Նրա յանձնումը Թուրքիային ոչ միայն դէպի Պարսկաստան մեր երթեւեկութիւնը կը խոչընդոտի, այլեւ պարսիկների կողմից կը համարուի թիւստ մութքիայի միջոցով շրջափակում եւ ըստ այդմ Հիւսիսարեւմտեան Պարսկաստանի ենթարկում Թուրքիային»: Նոյն տեղում, էջ 580:

17 Deutschland und Armenien..., էջ 435:

րից ու խուսանաւումներից, համաձայնում էր ճանաչել Բրեստի պայմանագրի պահանջները:

Թալէաթի եւ Ֆոն Հինցէի միջեւ կայացած բանակցութիւնների արդիւնքում սեպտեմբերի 23-ին ստորագրուեց մի գաղտնի արձանագրութիւն, որի հիմնական բովանդակութիւնը հետեւեալն էր. Թուրքիան ճանաչում էր Վրաստանը, Հայաստանը եւ Ադրբեջանը որպէս անկախ պետութիւններ: Գերմանիան ճանաչում էր դեռեւս միայն Վրաստանը, բայց հիւպատոսներ էր նշանակելու նաեւ Հայաստանում եւ Ադրբեջանում պաշտօնավարելու համար: Թուրքական կառավարութիւնը Հայաստանից եւ Ադրբեջանից ետ էր քաշելու իր զօրքերը: Երբ Թուրքական զօրքերը այդ երկու հանրապետութիւններին պատկանող տարածքներից (բացառութեամբ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին) դուրս գային, Գերմանիան պէտք է իր ազդեցութիւնը գործադրէր Ռուսաստանի վրայ, որ պէսզի վերջինս ճանաչէր Հայաստանի եւ Ադրբեջանի հանրապետութիւնները:

Արձանագրութիւնում այնուհետեւ նշուում էր, որ Թուրքիան փորձելու էր Հիւսիսային Կովկասում եւ Թուրքեստանում ինքնուրոյն հանրապետութիւններ ստեղծել, եւ որ Գերմանիան նրան այդ հարցում չէր աջակցելու, բայց նաեւ չէր խոչընդոտելու: Թուրքիան եւ Գերմանիան գործադրելու էին բոլոր ջանքերը, որպէսզի Քառեակ դաշինքը Կովկասի հումքից հնարաւորինս մեծ շահոյթներ ստանար: Ընդ որում՝ Թուրքիան համաձայնում էր, որ Բաքուի նախարարները եւ նախաձեռնող զրուէին Գերմանիայի վերահսկողութեան ներքոյ: Նախը պէտք է բաժանուէր Քառեակ դաշինքի երկրների, Ռուսաստանի եւ Կովկասեան երկրների միջեւ: Թուրքիան պէտք է Ադրբեջանի վրայ իր ազդեցութիւնը գործադրէր, որպէսզի այնտեղ գերմա-

նացի գաղութարարները նոյն ընդունելութիւնը եւ վերաբերմունքն ստանային, ինչպէս նախկին Ռուսաստանի միւս մասերում: Ծանաչուում էր Պարսկաստանի տարածքային ամբողջականութիւնը եւ անկախութիւնը: Ըստ այդմ՝ Թուրքիան պարտաւորուում էր Անգլիայի դէմ ձեռնարկուող ռազմական գործողութիւնների աւարտից յետոյ Պարսկաստանից ետ քաշել իր զօրքերը, իսկ մինչ այդ նա պէտք է հնարաւորինս դիւրացնէր Պարսկաստանի հետ Գերմանիայի երթեւեկութիւնը:¹⁸

Արձանագրութիւնը ստորագրելիս Թալէաթը հարկ էր համարել նաեւ բանաւոր կերպով յայտարարել, որ ինքը համոզուած էր Թուրքիայի եւ կովկասեան կառավարութիւնների միջեւ լաւ յարաբերութիւնների հաստատման անհրաժեշտութեան հարցում եւ հնարաւոր ամէն բան անելու էր, որպէսզի Թուրքական կառավարութիւնը նկատի առնէր կովկասեան կառավարութիւնների տարածքային պահանջները եւ նրանց հետ բարեկամաբար համաձայնութեան գար սահմանների հարցում: Սեպտեմբերի 25-ին Թուրքիա վերադառնալուց առաջ Թալէաթը նաեւ հաւաստիացրել էր, որ Կոստանդնուպոլսում կովկասեան կառավարութիւնների ներկայացուցիչների հետ բանակցելու էր տարածքային հարցերի շուրջ:

Պետքարտուղարը, սեպտեմբերի 25-ին մի հեռագրով գեներալ Ֆոն Կրեսին տեղեկացնելով վերոնշեալի մասին, նրան միաժամանակ յայտնում էր, որ գերմանական կողմը պէտք է Կոստանդնուպոլսում կայանալիք այդ բանակցութիւնների համար Թալէաթին որոշ ժամանակ տար, եւ, եթէ բանակցութիւնների արդիւնքում համաձայնութիւն կայանար, ապա այնտեղ նա-

խատեսուած համաժողովը կարելի էր համարել իրականացուած:¹⁹

Չնայած Բրեստի պայմանագրով վճռուած սահմանները ճանաչելու խնդիրը, ինչպէս տեսնում ենք, գերմանա-թուրքական այդ արձանագրութիւնում յստակ կերպով չէր արտացոլուել, եւ նախատեսուած էր այն դարձնել Կոստանդնուպոլսում կայանալիք բանակցագործընթացի թեմա, այնուամենայնիւ, Հայաստանից եւ Ադրբեջանից Թուրքական զօրքերի ետքաշման թուրքական կառավարութեան յանձնառութիւնը հայկական կողմի համար խիստ կարեւոր ձեռքբերում էր: Այդ փաստը, ինչպէս եւ այն, որ Թալէաթն ու Ֆոն Հինցէն Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրով նախատեսուած սահմանների ճանաչման վերաբերեալ բանաւոր համաձայնութեան հետեւեալ օրերում, որ դա կ'ամէն էին եկել, յոյս էր ներշնչում, որ դա կ'ամրագրուէր Կոստանդնուպոլսում տեղի ունենալիք բանակցութիւններում:

Այդ արձանագրութեամբ վաւերացուում էր նաեւ մի կարեւոր իրողութիւն, որը կարող էր Կովկասում առկայ քաղաքական իրադրութիւնը որոշակիորէն փոփոխել, այն է՝ Ռուսաստանի հետ Թուրքիայի եւ Գերմանիայի համագործակցային քաղաքականութիւնը: Դա էր, թերեւս պատճառը, որ Համօ Օհանջանեանը, եթէ նախկինում չէր բարձրաձայնում Բեռլինում խորհրդային Ռուսաստանի դեսպան Ադոլֆ Եօֆէի հետ իր ունեցած առնչութիւնների մասին, հոկտեմբերի սկզբին Գերմանիայի պետքարտուղար դր. Ջոլֆին տեղեկացրել էր, որ արդէն որոշ ժամանակ նրա հետ կապի մէջ էր եւ բաւական յաճախ էր այցելում նրան՝ տրամադրելով նիւթեր Հայկական հարցի եւ Հայաստանի հանրապետութեան խնդիրների մասին: Ինչպէս տեղեկացնում էր Ջոլֆը բանակային հրամանատարու-

19 Տե՛ս այդ մասին պետքարտուղարի կողմից Ֆոն Կրեսին ուղարկուած հաղորդագրութիւնը: Նոյն տեղում, էջ 584-585:

18 Համաձայնագրի ամբողջական տեքստը տե՛ս Die Armenische Frage..., էջ 586-588:

ենթակայ Համաձայնագրի նախագիծ՝ այն սպառնացում է, թէ Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրի ճանաչման Հարցը հոկտեմբերին որքան մօտ էր իր լուծմանը:²⁶ Թուրքիայի այդ յանձնառութիւնն, ինքնին Հասկանալի է, որ պարտադրուած էր եւ ամենեւին էլ Թուրք կառավարողների Հակահայկական դիրքորոշման փոփոխութիւն չէր նշանակում: Դա պարզորոշ վկայում էին նաեւ սեպտեմբերին Բաքուում կատարուած եղերական իրադարձութիւնները, որոնց մենք կը փորձենք ստորեւ փոքր-ինչ Հանգամանալից անդրադառնալ:

Ինչպէս Բաքուում արտակարգ իրավիճակների ղեկավար, օսմանեան բանակի աւագ լէյտենանտ, ազգութեամբ գերմանացի Պարաքուինն էր վկայում սեպտեմբերի 26-ին գեներալ-լէյտենանտ Ֆոն Զեկտին ուղարկուած իր տեղեկագրում, դեռ օգոստոսի 23-ին Միւրցիլ փաշան իրեն Հաղորդել էր, որ Թաթարները մտադրուել էին Թուրքական զօրքի՝ Բաքու մտնելուն պէս սկսել Հայերի կոտորածը: Պարաքուինն այդ մասին բազմիցս տեղեկացրել էր ղէպի Բաքու շարժուող Թուրքական դիվիզիայի գլխաւոր հրամանատար Նուրի փաշային՝ խնդրելով կանխիչ միջոցառումներ ձեռնարկել, եւ, բացի այդ, նրան էր ներկայացրել քաղաքի գրաման հետ կապուած միջոցառումների մի ծրագիր, որի ղէպքում սկզբից եւեթ կը բացատրէին սպանդն ու կողոպուտը: Նուրի փաշան, սակայն, անտարբեր էր գտնուել թէ՛ նրա նախազգուշացումների եւ թէ՛ վերոնշեալ ծրագրի հանդէպ: Քաղաքի Թա-

թարների մեծագոյն մասը, ինչպէս վկայում էր Պարաքուինը, բնակուում էր բարձր, 2 կմ երկարութիւն ունեցող պարիսպներով մեկուսացուած մի թաղամասում, եւ թաղամասի մուտքերը գրաւելու միջոցով Զարգարաբերին վտանգադրձելը որեւէ գծուարութիւն չէր ներկայացնում: Հասկանալի է, որ նրա այդ առաջարկը նոյնպէս չէր ընդունուել:

Ըստ Պարաքուինի Հաղորդման՝ դեռ Թուրքական զօրքերի կողմից Բաքու մտնելուց առաջ՝ սեպտեմբերի 16-ին, Բաքուում տներում շարունակ կրակոցներ էին լսուում, մինչդեռ քաղաքի մօտ մի բարձունքի վրայ տեղակայուած Թուրքական հետեւակային գունդն ու միւս զօրամասերը, դրանց հանդէպ միանգամայն անտարբեր կերպով, այդ նոյն ժամանակ զբաղուած էին մահմեդական կուրբան-Բայրամ տօնին նուիրուած ժամեր շարունակ տեւող շքերթով: Սեպտեմբերի 17-ի առաւօտեան, երբ Թուրքական զօրքը դեռ քաղաք չէր մտել, Թաթարական ամբոխն արդէն սկսել էր Հայ բնակչութեան զանգուածային սպանդը, հետապնդումներն ու կողոպուտը, իսկ կէսօրից քաղաք մտած Թուրք զինուորները բնաւ չէին փորձում խանգարել դրան: Աւելին՝ նրանք նոյնպէս միանում էին Թաթարներին:²⁷ «Փոխանակ բոլոր միջոցներով

27 «Փողոցներում գրեթէ մարդ չկար. - Աշուտ էր Պարաքուինը Բաքուի գրաման ժամանակ մարտական գործողութիւնների վայր դարձած արուարձաններից մէկում այդ օրը առաւօտեան իր կատարած շրջագայութիւնից յետոյ: - Խանութներն ու կրպակները համարեաւ առանց բացատրութեան թալանուած էին: Տարբեր տեղերում թալանուած իրերի կոյտեր էին կուտակուած, որոնք հաւանաբար թաթար կողոպտիչներից էին խլուել եւ մասամբ հսկում էին առանձին թուրք զինուորների կողմից: ... Զինուորներն ու թաթարներն անարգել փորփորում էին եւ տանում էին, ինչ իրենց դուր էր գալիս: Արդէն այդ շրջագայութեան ժամանակ ի յայտ եկան մեծ անկարգութիւնների ատուրանալի հետքերը: Մահապարհին ընկած էր երկու սպանուած երեխայ: Մի կողմակի արքանցուհի՝ անմիջապէս մեր կողքին, որտեղ մի

26 Կարելի է, անշուշտ, նաեւ ենթադրել, որ անխուսափելի պարտութեան առջեւ կանգնած Թուրքիան Բրեստի պայմանագրի ճանաչման յանձնառութեամբ ձգտում էր իր բանակի գործողութիւնները գերկազմակերպել առկայ իրաւասպանագրային լիազօրութիւնների շրջանակներում, ինչը, սակայն, եթէ Ակաթի առնենք պարտութեան դէպքում թուրքական բանակի անվերապահ կապիտոլիանցիայի հետանկարք, իրատեսական չի կարող համարուել:

քաղաքում կարգուկանոնի հաստատմամբ զբաղուելու՝ փաշաները, քաղաքի պարէտը, գլխաւոր շտաբի բոլոր սպաները անգործ թրեւ էին գալիս հիւրանոցի սրահներում, գրում է Պարաքուինը: - Երբ բողոքներ եւ խնդրանքներ էին ուղղուում Նուրիին կամ պարէտին, դրանք այնպիսի ներքին անտարբերութեան էին հանդիպում, որ իսկոյն եւեթ ակնյայտ էր դառնում լուրջ նախանձախնդրութեան եւ ցանկութեան բացակայութիւնը: Տեղի ունեցաւ մի մեծ ճաշկերոյթ, որին մասնակցեցին բոլոր գեներալները եւ շտաբները քաղաքի պարէտի հետ միասին: Երգուեց «Կովկաս» երգը: Անթաքոյց հրճուանքով ինձ ներկայացրեցին դրա բովանդակութիւնը, այն է՝ Թուրքիան այսուհետեւ դարձեալ տէր է դառնում իր հին սեփականութեանը՝ Կովկասին: Ճաշկերոյթի ժամանակ եւ դրանից յետոյ քաղաքում սպանդն ու թալանը շարունակուում էր...: Ես չեմ կարող չխիշատակել բազմիցս բարձրաձայն հնչեցուած այն տեսակէտը, որ Թուրքական ղեկավարութիւնը Թաթարներին կամենում էր Հնարաւորութիւն տալ վրէժ լուծելու հայերից»:²⁸

Ինչպէս փաստում էր Պարաքուինը, սպանդի, թալանի եւ բռնաբարութիւնների անարգել ընթացքը պատճառաբանուած էր զօրքի անգործութեամբ: Այդ պայմաններում Հայերի ղէմ զանգուածային գործողութիւնները սպառնում էին վերածուել առհասարակ քրիստոնեաների հետապնդումների: Քաղաքում գտնուող՝ չէզոք երկրների հիւպատոսներն ու միւս օտար-

երկրացիները, որոնց մեծ մասը հաւաքուել էր Մետրոպոլ հիւրանոցում, օգնութիւն էին ակնկալում գերմանացիներից, մինչդեռ վերջիններս նոյնպէս ապահովագրուած չէին, եւ Պարաքուինը կարողագրուած չէին, եւ Պարաքուինը որ անում է հասնել միայն այն բանին, որ անուստ պահակակէտեր կանգնեցուեն: Նա մի գերմանական ընտանիքի խնդրանքով պահակակէտ է կանգնեցնում նաեւ մի երիտասարդ Հայ իրաւաբանի տան մօտ, որին Թաթարները նախկինում բազմիցս սպառնալիքներ էին ուղղել, իսկ տանտիրոջ տեղափոխում է Մետրոպոլ հիւրանոց: Երեկողափոխում է Մետրոպոլ հիւրանոցում, յետոյ, այնուամենայնիւ, պարզ է դառնում, որ գէնքի սպառնալիքի ներքոյ կողոպուտուել էին մինչեւ իսկ մի շարք գերմանացիների բնակարաններ: Գերմանացիների կեանքի եւ գոյքի ապահովման առնչուկեամբ Նուրի փաշային ուղղուած՝ նրա վճռական բողոքներն ու պահանջները որոշ արդիւնք տալիս են: Քաղաքի պարէտը հեռացուում է, եւ նրա փոխարէն պարէտ է նշանակուում Նասիմ բէյը: Քաղաք եւ ուղարկուում սպաներ եւ նոր գնդեր: Հիւրաբար կախաղան է հանուում: Այդ նոյն ժամանակ, սակայն, քաղաքում կրակոցներն ժամանակ առաւելու մեծ չափեր ու աղմուկը շարունակ աւելի մեծ չափեր էին ընդունում: Յատկանշական է, որ Նուրի փաշայի կարգադրութեամբ զուգահեռաբար վերոնշեալ մահմեդական տօնի առթիւ գարկեր, ինչը նա պատրուակ էր դարձնում քաղաքի տարբեր վայրերում լսուող կրակոցները նոյնպէս այդ կերպ պատճառաբանելու համար:

Այս ամէնից, անշուշտ, որոշակիորէն պարզ է դառնում, թէ Թուրքական կառավարութիւնը որպիսի պատասխանատուութեամբ եւ լրջութեամբ էր վերաբերում իր գերմանացի ղառնակցին: Պարաքուինի բողոքներն ու պահանջները, սակայն, որեւէ քանակ արդիւնքի չյանգեցնելով, ի վերջոյ

կրակոց: Մի պատուհանից կանայք յուսահատ կերպով օգնութիւն էին կանչում: Մեր մեքենաները կանգնեցին, մենք շտապեցինք տուն, բայց ոճրագործները դէպի յետին կողմն էին փախել: Արդէն այն ժամանակ տիրում էր այն համընդհանուր համոզումը, որ քաղաքում իրաքանչիւր կարգ ու կարգապահութիւն վերացել էր, եւ քրիստոնէայ բնակչութիւնը թալանուում, բռնաբարում ու սպանուում էր եգիպտացիները: Deutschland und Armenien..., էջ 441-442:
28 Նոյն տեղում, էջ 443:

զօրքերի եւ թաթարների այդ նոր անմարդկային գործողութիւնների դէմ»:⁴⁹

Գեներալ Փոն Կրեսն այլ բան չէր կարող անել, քան Հոկտեմբերի 30-ին համահաւաք կերպով դարձեալ կանցլերին ուղարկել Բաքուի հայերի կոտորածի վերաբերեալ իր մօտ գտնուող նիւթերը, նաեւ այդ առնչութեամբ մի կողմից իր եւ միւս կողմից թուրքական հրամանատարների, ղիւանազէտների, ինչպէս եւ աղբբեջանական կառավարութեան միջեւ տեղի ունեցած զրազրութիւնը՝ դա բացատրելով այդ փաստաթղթերի արխիւաւորման անհրաժեշտութեամբ: Նա միաժամանակ արձանագրում էր, որ այդ կոտորածները կանխելու համար իր կողմից կատարուած առաջարկները չեն իրագործուել սոսկ թուրքերի մերժողական կեցուածքի պատճառով, եւ որ ինքը զբանց իրագործումը հարկադրելու համար որեւէ լծակ չի ունեցել:⁵⁰

Ուշագրաւ է, որ չնայած Հոկտեմբերի 30-ին թուրքիան հարկադրուած եղաւ զինադադար կնքել, եւ նոյեմբերին թուրքական զօրքերը սկսեցին հեռանալ Անդրկովկասում իրենց գրաւած տարածքներից, բայց Ախալքալաքի շրջանի փախստական դարձած հայութեան դրութիւնը շարունակում էր մնալ խիստ օրհասական, եւ դա այն պատճառով, որ այժմ նաեւ վրացական իշխանութիւններն էին նրանց արգելում վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը: Դա էր վկայում Զամալեանի կողմից նոյեմբերին Գերմանիայի արտգործնախարարութեան միջոցով Գերմանա-հայկական ընկերութեան փոխնախագահ Զէյմա Գրինֆելդին ուղարկուած հեռագիրը, որը վերջինս նոյեմբերի 27-ին առաքում է Համօ Օհանջանեանին. «Զամալեանը ... հեռագրում է, որ Ախալքալաքի շրջանի ամբողջ բնակչութիւնն անօթեւան եւ առանց որեւէ

49 Նոյն տեղում, էջ 594-595:

50 Deutschland und Armenien..., էջ 440:

սնունդի Բակուրիանիի լեռներում մատնուած է ոչնչացման,- գրում էր Գրինֆելդը Օհանջանեանին:- Տեղական իշխանութիւնները նրանց արգելում են իրենց վայրը փոխել: Հայկական կառավարութեան բոլոր ջանքերը, որ փախստականներն իրաւունք ստանան վերադառնալ թուրքերի կողմից գրաւուած իրենց հայրենի տարածքները, մնում են անարդիւնք: Հիւանդութիւնները, սովն ու սարսափելի ցուրտը օրական հարիւրաւոր զոհեր են խլում: Եթէ փախստականներին շատ շուտով հայրենիք վերադառնալու հնարաւորութիւն չտրուի, նրանք բոլորը կը մեռնեն: Զամալեանը խնդրում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ չարիքը կանխելու համար եւ ամենուր, որտեղ Դուք հարկ կը համարէք, ուղի հեռագրեր ուղարկել: Նա անհամբերութեամբ սպասում է պատասխանի: Ես Զամալեանին հեռագրեցի, որ հեռագիրը փոխանցել եմ Ձեզ եւ խնդրեցի Հայաստանի քաղաքական իրադրութեան վերաբերեալ մանրամասներ հաղորդել ու ամենաարագ կերպով առաքել խաղաղութեան վեհաժողովի մեր պատուիրակութեանը»:⁵¹

Այն, թէ Ախալքալաքի առնչութեամբ վրաստանի հետ յարաբերութիւններն այնուհետեւ ինչպիսի զարգացում ունեցան, որոշակիօրէն յայտնի է: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա Մաքսի գլխաւորած կառավարութիւնը Հոկտեմբերի վերջին եւ նոյեմբերի սկզբին Անդրկովկասում այլեւս որեւէ դերակատարման յաւակնութիւն չէր կարող ունենալ եւ զբաղուած էր իր երկրի ներքին ու արտաքին քաղաքական ճգնաժամի յաղթահարման խնդիրներով: Նուստացուցիչ պայմաններով զինադադարի կնքման եւ դրա հետ կապուած՝ բաղձաթիւփտանգների ու սիսկերի հեռանկարը, սակայն, Մաքսի կառավարութեանը չխանգարեց Գերմանիայում սպաստանի թոյլտուութիւն յատկացնել ոճրագործներ թա-

51 Die Armenische Frage..., էջ 596:

լէսթին եւ էնվերին: Հոկտեմբերի 30-ի դրութեամբ գերմանական արտգործնախարարութիւնն արգէն սպաստան տրամադրելու խնդրանք էր ստացել Թալէաթ եւ էնվեր փաշաներից,⁵² եւ նոյն օրը եւեթ արտգործնախարար դր. Զոլֆը Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանին հրահանգում էր դրական ընթացք տալ նրանց դիմումին: Քանի որ այդ փաստաթղթով որոշակիօրէն պարզ է դառնում հարցի վերաբերեալ գերմանական կառավարութեան պաշտօնական դիրքորոշումը, ստորեւ ներկայացնում ենք դրա հիմնական բովանդակութիւնը: «Թալէաթ փաշայի եւ էնվեր փաշայի համար, որոնք մեզ հետ դաշինքը կնքել են եւ հաւատարիմ կերպով մեր կողքին են եղել, մեր երկիրը բաց է,- նշում էր արտգործնախարարը:- Խնդրում եմ նրանց ամէն կերպ օգնել, եթէ նրանք կարծում են, որ ստիպուած են թուրքիայից փախչել քաղաքական հետապնդումների պատճառով: ...Միւս նախկին իշխանաւորների դէպքում խնդիրն այլ է: Նրանց, ովքեր փախուստի միջոցով ուզում են խուսափել հայերի հալածանքների պատասխանատուութիւնից, մեր կողմից սպաստան չի կարող տրամադրուել: Մենք ամենաձանր շրջանում մեր հնարաւորութեան սահմաններում արել ենք ամէն բան՝ սարսափները կանխելու համար եւ չենք կարող յետին թուով մեզ մեղակից դարձնել՝ ոճրագործներին պաշտպանելով պատժից: Նմանապէս եւ մենք հիմք չունենք հոգ տանելու նրանց համար, ովքեր իրենց պաշտօնները չարահաճ են՝ ժողովրդին անխնայ կողոպտելով, եւ հիմա պէտք է իրենց վատակամ պատիժը կրեն»:⁵³

Հայ ժողովրդի այդ երկու դահիճներին Գերմանիայում սպաստան տուող կառավարութեան կողմից միւս յանցագործներին սպաստանի մերժումը, բնականաբար, չէր կարող այն բարոյական շարժառիթով չթելադրուած լինել, որի պատրանքը միթելադրուած լինել, որի յանձնարարականը: Եւ ստեղծել այս յանձնարարականը: Այդ մերժման բուն պատճառը, Գերջորդիւ վկայում էր նաեւ նախարարը, Գերմանիային ուղղուած՝ մեղսակցութեան մեղադրանքներից խուսափումն էր: Իսկ այն պնդումը, թէ Գերմանիան հնարաւոր ամէն պնդումը, թէ Գերմանիան հնարաւոր ամէն բան արել է հայերի բնաջնջումը կանխելու կամ արգելելու համար, ծառայեցում էր որպէս այդ մեղադրանքներից ձեռքազատման եւ Գերմանիայի արդարացման «հիման եւ Գերմանիայի արդարացման» Պաշտօնակէ, չէր համապատասխանում: Պաշտօնական Գերմանիան պատերազմի ողջ ժամանակ Գերմանիան պատերազմի նպատակաւ միջոցում երբեւէ չփորձեց ի նպատակաւ բնաջնջող հայերի իր թուրք դաշնակցի հետ խօսել հարկադրանքի լեզուով, ինչը նա յաջողութեամբ կարող էր անել: Եւ դա փաստարկուած է ոչ միայն խնդրոյ առարկայ իրադարձութիւնների՝ համալիր դիտարկման միջոցով, այլեւ գերմանացի այն տարկման դիւանագէտների, որոնք, նուորականների վկայութիւններով, որոնք, բնաջնջող ժողովրդի հանդէպ անտարբեր չլինելով, նաեւ իրատես կին եւ փորձում էին այդ իրատեսութիւնը ներշնչել իրենց կառավարութեանը:

Լէաթիւն եւ էնվերին սպաստան տալու՝ Գերմանիայի մտադրութեան առնչութեամբ, եւ Զոլֆի իր այս նոյն յանձնարարականում այդ մասին դեսպանին հետեւալն էր հրահանգում. «Իզգէթ փաշայի ցանկացած պարզաբանումը մենք չենք կարող տալ: Եթէ նա նորից կը վերադառնայ իր հարցին, Դուք պէտք է նրան ասէք, որ մենք (յանցագործների - Ա. Հ.) յանձնման պարագայում առաջնորդում ենք երկու երկրների միջեւ մամ պայմանագրով» (նոյն տեղում):

52 Ակնէրեալար Գման դիմումներով եւ համալրելու անելու ասել երկիրը պարագլուխներ:
53 Die Armenische Frage..., էջ 592-593: Ուշագրաւ է, որ արդէն հոկտեմբերի 30-ի դրութեամբ թուրքական նոր կառավարութեան ղեկավար Ահմեդ Իզգէթ փաշան գերմանական դեսպանից պաշտօնական պարզաբանում էր պահանջել թա-